ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ԱՄՆ-ի Յուտա նահանգում կա զարմանալի բնական քանդակներով ափռված մի վայր, որին անվանում են «ՀՐԵՇՆԵՐԻ ՀՈՎԻՏ»: Եվ ոչքեր են այս քանդակների հեղինակները: Պարզվում է, որ **քանդակագործը մեկն է՝ քամին***:*

Ապարների երկրաբանական յուրահատուկ կառուցվածքը և քամու ինտենսիվ աշխատանքը քարերին տվել են ամենաանհավանական ձևեր: Քանդակներից շատերն երևայական հրեշների տեսք ունեն: Դրանց մեծ մասը մերկ գլուխներով են, ոմանք էլ կրում էին լայն գլխարկներ, որոնք երկար ստվեր էին գցում նրանց անշարժ ճակատներին: Հրեշներից շատերը «ձեռքերը» մեկնած ասես խոսում են իրենց դիմացը կանգնած մյուս արձանների հետ: Տեղի հնդկացիները այդ հովիտը համարում են սրբազան: Այդ են վկայում շրջակայքում առկա ժայռապատկերները: